

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиς, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).  
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզովով.  
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.  
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Գոյրերը՝ Սօֆիա Մուշրումիանց, Օլիաննա Օրօլիֆանց, Էդուարդ Ալեքսանդր, Երոյ աղջիկները՝ Ալեքսանդր Մովսիսեանց, Եւա Տէր-Բաղդասարեանց իրանց ամուսիններով խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին

## ԱՆՏՈՆ ԶՈՀՐԱԲԵԱՆԻ

մահը: Յուդաիզմը իրեն կիրակի, յուլիսի 25-ին, առաւօտեան 10 ժամին Կարմիր Աւետարանի եկեղեցում, իսկ թաղումը Սօֆիականի գերեզմանատանը: Ամբիջը ամեն օր երեկոյեան 7½ ժամին: Հաւարար, Կախտախնայա փող. տուն Կիւղեբերդի-Կօպածէ:

### ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Ռուս գերմանական դաշնագիր. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի լուրեր. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ. Թիւրք կնոջ ազատագրութիւնը.

### ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳԱՇՆԱԳԻՐ

Հեռագիրները հաղորդեցին, որ Ռուսաստանի և Գերմանիայի մէջ տեղի ունեցող բանակցութիւնները նոր առեւտրական գաշնագրի մասին վերջապէս: Շատով նա կը հրատարակվի և կը սկսէ գործել իբրեւ երկու պետութիւնների յաբաբերութիւնների նոր ուղեցոյց տնտեսական մի շարք գործառնութիւնների մէջ:

Թէ Ռուսաստանը և թէ Գերմանիան շատ մեծ կարեւորութիւն էին տալիս այդ դաշնագրին: Եւ իրաւունք ունէին: Գաշնագիրը ստեղծում է թէ նպատակը և թէ անհատական պայմաններ այս ու այն արդիւնքների ներմուծութեան կամ պատահանութեան համար: Իսկ այդ պայմանները ազդում են տնտեսական կեանքի բազմաթիւ ճիւղերի զարգացման վրա:

Ներկայումս միջազգային յարաբերութիւնների մէջ շատ անգամ վճռական դեր կատարում են ոչ այնքան զուտ քաղաքական, որքան տնտեսական ճանգարանները: Եւրօպական պետութիւնների գաղութային քաղաքականութեան հիւսքը կազմում է տնտեսական շահը: Եւրօպայի 2/3-ը տնտեսաբանները համարում են իր համար մի

մեծ շուկայ, մի ընդարձակ վաճառանոց, ուստի աշխատում է այնտեղ որոշ շրջան ապահովել իր արդիւնքների վաճառանման համար: Նոյնն է անում Եւրօպայի Աֆրիկայի լայնատարած երկիրներում, որոնք այժմ բաժին-բաժին են եղել պետութիւնների մէջ որոշ սահմաններում:

Գերմանիայի համար Ռուսաստանը շատ ընդարձակ և շահաւէտ մի վաճառանոց է գործարանական արդիւնքների համար, իսկ միջնոյն ժամանակ ինքը Գերմանիան մեծ վաճառանոց է Ռուսաստանի հոսմանիւթերի համար: Երկու պետութիւնների ներկայացուցիչները յանգ էին գործը դնում իւրաքանչիւրը իր կողմից աւելի արտօնելու վիճակ ստեղծել իրանց ապրանքների համար, բայց անկասկած ստիպւած էին փոխադարձ գիշտութիւնների և ներկայումս կանգ առան այն ծրագրի վրա, որ կը հրատարակվի իբրեւ դաշնագրի երկու պետութիւնների մէջ:

Ռուս-Գերմանական դաշնագիրը մեծ աշխատանքի և երկարատեւ բանակցութիւնների արդիւնք է: Նա ենթադրվեց մի քանի անգամ մասնակի փոփոխութիւնների միջոցով: Որքան որ արտաքին իր ներկայ իւրաքանչիւրի:

Այդ դաշնագրի մշակման և վերջնական խմբագրութեան գործը ազդում էր երկու պետութիւնների բոնած դիրքերի վրա և ուղիւ միջազգային գործերի մէջ էլ: Այժմ նա վերջացած է, և ինչպէս էլ ինչի նա խմբագրված, միջազգային մի ակտ է, որ տարիներ շարունակ պէտք է ազդէ երկու պետութիւնների առևտրական յարաբերութիւնների քննադրութեան վրա:

Նամակաւոր կանանց հարցի և շարժման մասին արտաքին է ոչ միայն ինքնուրոյն նշանակող աշխատութիւններ, այլ և այդ հարցի մասին օտար լեզուներով լոյս տեսած գրքեր: Բոլոր նշանակող գործերը թարգմանել է գերմաներէն լեզուով: Անա մի այդպիսի թարգմանութիւն է ներկայացնում և Ֆրանսիացի յայտնի գրող Գ. Գորիսի «Թիւրք կինը» վերնագրով աշխատութեան գերմաներէն թարգմանութիւնը, որից և քաղում մի քանի փաստեր թիւրք կնոջ ազատագրութեան հարցի հետ «Մշակ» ընթերցողներին ծանօթացնելու: Հեղինակի աշխատութիւնը նուիրված է թիւրք կնոջ ժամանակակից սոցիալական, տնտեսական և քաղաքական դրութեան նկատմամբ, որը ցոյց է տալիս, թէ արեւելքի հարեմական ճնշված ստրկուհու կեանքը ինչպէս դանդաղ կերպով յեղաշրջվում և ձգտում է այն իդէալական նպատակին, որի համար իր բոլորակիցները քաղաքակրթված երկրներում արդէն մեծ նուաճումներ են արել: Ֆրանսիացի գիտնականը վկայում է, որ բոլորովին աննպաստ պայմաններում գտնվող արեւելցուհին էլ արդէն սկսում է ստրկութեան արտաքին նշաններ իրանց հետագիտել թութափել: Պոլսի միջին դասակարգի և թիւրքերի ներքին գաւառների մահմետական կանայք տանից դուրս դուրս կրում են իրանց անկասկած հագուստը, որը նրանց բոլորովին կորուստ է արտաքին աշխարհի և ծածկում տղամարդկանցից: Չը նայելով որ, արեւմտեան եւրօպայի սովորութիւններից շատերը յար-

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### Մ Ա Մ Ո Ւ Լ

Անդրկովկասի երկու մայրաքաղաքները— Բաքուն և Թիֆլիսը մնացել են առանց գլխի: Գրեթէ միաժամանակ հեռացան իրանց պաշտօնից Նովիկովը և իշխան Արդուսթիսկի-Դօլգորուկին: Նրանց հրաժարման պատճառները Պետերբուրգի առաջ մամուլի քննադատութեան նիւթ դարձան և այդ քննադատութեան մէջ Բաքուն և Թիֆլիսի գլուխները և ունեցան իրանց բաժինը:

Յայտնի առաջ տղանուր ֆիլիսոփա «Բուկիան» խիստ մաշվ գոյներով է ուրուագծել Բաքուի գլուխի նկարագիրը «НОВОСТИ» լրագրի մէջ և ոչ միայն գլուխի, այլ և Բաքուի ամբողջ ինտելիգենցիայի նկարագիրը: Կարելով այդ նկարագիրը, մարդ ակամայ մտածում է. «ոչ, անկարելի է, որ մի ինտելիգենցիա, բաղկացած ոչ թէ հարկւրաւոր, այլ հազարաւոր անդամներից, այդքան փչացած, բարոյագէտ նեխված ապականված լինէ, ինչպէս նկարագրել է «Բուկիան»։ Դա վերին աստիճանի յուսահատական է: Եւ գուր է լուր Բաքուի ինտելիգենցիան այն անպատիւ մեղադրանքների դէմ, որ բարդ է նրա վրա «НОВОСТИ» լրագրի աշխատակիցը. այդ դէպքում լուրերը համաձայնութեան նշան է: Մենք գիտենք, որ Բաքուի գլուխները գործում են շատ ինտելիգենտ, բարձր կրթութեան տէր անձինք. արդ, եթէ այդ գլուխի ամբողջ կազմը առանց խորութեան նկարագրվել է այնպիսի մաշվ գոյներով, պարզ է, որ առաջ ֆիլիսոփայական բացահայտութիւն անելու հարկ չէ տեսնել: Եւ քանի որ նախկին քաղաքագլուխ Նովիկովը, ինչպէս յայտնում է լրագրից, պատրաստում է մի ընդարձակ գիրք Բաքուի գլուխի մասին, որի մէջ բացատրելու է, թէ ինչը ստիպեց իրան հրաժարվել քաղաքագլխի պաշտօնից և որով հաստատելու է Բուկիայի նկարագիրը, մենք կարծում ենք, որ Բաքուի ինտելիգենցիան պէտք է—եթէ միայն ունի փաստեր—մաքէ, սրբէ իրանից այն արատը, այն մուրը, որ առաջ գրողը այն քան աղատութեամբ քննում է նրա երեսին:

Գրական հօնօրարի խնդիրը բազմակողմանի է լուրը քննադատութեան նիւթ է դարձել առաջ մամուլի մէջ Չեխովի մահվան առի-

թով: Մի և նոյն ժամանակ նա երևան հանեց Սուվորինի հրատարակչական գործունէութեան մի շատ խայտառակ կողմը: Չեխովի մահից յետոյ Սուվորինը իր «Новое Время» լրագրում մի արշաւանք սկսեց «Նիվա» շաբաթաթերթի հրատարակիչ Մարքսի դէմ, և նրա գրելով նրան, որ նա 75,000 ռուբլի վճարելով Չեխովին, շարունակ հարստահարում էր նրան և իր ստրուկն էր շինել, որովհետեւ այդ գումարով գնել էր Չեխովի, թէ անցեալ և թէ ապագայ բոլոր գրուածները: Մի և նոյն ժամանակ Սուվորինը սկսեց առատ արտասուք թափել, մեծ ցաւ յայտնել Չեխովի մահվան առիթով և նրան երկինք բարձրացնել, հռչակելով նրան իբրեւ մի համաշխարհային հանձար, մի գրող, որի հետ իբր ամենամտերիմ, ամենասերտ բարեկամական յարաբերութիւններ է ունեցել: Սակայն առաջ յայտնի հրապարակախօս Դորօշվիլը և հրատարակիչ Մարքսը սառը ջուր անցրին Սուվորինի այդ ոգևորութեան վրա. նրանք փաստերով ցոյց տուին, որ Չեխովի դադարի վրա նրա թափած արտասուքները կօրօրելուհան են, իսկ նրա արշաւանքը Մարքսի դէմ առաջ է եկել ոչ թէ Չեխովի շահերը պաշտպանելուց, այլ իր մըրցակցին, հրատարակիչ Մարքսին, հարուած հասցնելու գծով և շահաւէտ դիտարկութիւնից:

Դորօշվիլը «Русское Слово» լրագրի մէջ գրած իր յօդուածում մեղադրում է Սուվորինի կեղծաւորութիւնը: Բանից դուրս է գալիս, որ Չեխովի մահից մի ամիս առաջ, Սուվորինի օրգանը նրան անուանեց միջակ մեծութեան գրող, և ոչ միայն թոյլ դրամատուրգ, այլ և դատարկ, միակերպ, ձանձրալի, բացի դրանից նա յայտնեց, որ Չեխովի գրամաները ոչ միայն չեն կարող դրամա կոչվել, այլ իսկապէս յիմար և գրեթէ անբովանդակ խօսակցութիւններ են: Իսկ մի ամիսից յետոյ նա բառ չէր գտնում և բաւական արտասուք ողբալու անգլին կորուստը և համաշխարհային հանձարի մահը:

Հրատարակիչ Մարքսը միւս կողմից փաստերով ցոյց տուեց, թէ ներկայ դէպքում Սուվորինը ցանկացել է միայն փեսայի նրան իբրեւ մրցակցի. նա ապացուցեց, որ, առաջին, ինքը Մարքսը 75,000 ռուբլով գնել է Չեխովի միայն այն գրուածները, որ նա գրել էր մինչև 1899 թ., այն է մայմանագիր կնքելու օրը, իսկ դրանից յետոյ գրուածների համար առանձին

բանաստեղծ Ֆադիլ-Բեյը իր «Չինան-նամ» վերնագրով պօսեմայում հետեւել խօսքերով էր երգում չերեզդուհու առասպելական գեղեցկուհիները: «Չերեզդուհու առաջ դժգոհանում է արեգակի ճառագայթը, աստուածային գեղեցկութիւնը զարդարում է նրան և ամենամաքուր սիրտը փայլում է նրա աչքերում: Եթէ նրանց գեղեցկութիւնը մարդկանց ուշադրութեան է արժանանում, դրա գլխաւոր պատճառը չերեզդուհու ընտանիքների աղքատութիւնն է, որը նրանց կանանց ամբերին մատչելի է դարձնում: Նրեթական կարիք ունեցող չերեզդուհու կամ չերեզդուհու փողով ծախում է իր աղջկան, որ յետոյ Պոլս գնալով սուլթանի, փաշաների և ուրիշ հարուստ մահմետականների հարեմների հարձն է դառնում: Չերեզդուհու օրօրոցային երգերից շատերը չերեզդուհու աղջիկ երեխաներին դուր օրօրօցում ապագայի համար այդպիսի փայլուն վիճակ են խոստանում: Բայց թէ արդեօք հեռու երկիրներ գաղթած չերեզդուհուները իրանց ցանկացած նպատակին են հասնում, դրա մասին չերեզդուհու ծնողները հազիւ թէ տեղեկութիւն են ստանում: Թէ չերեզդուհուները և թէ թրքուհիները հարեմներ մտնելուց յետոյ պարտաւոր են իրանց կապերը մի անգամ ընդ միշտ իրանց հայրենիքից կտրելու: Նրանք նոյն իսկ պարտաւոր են իրանց անունները փոխել և ուրիշ փաղաքական անուններ կրել: Թիւրքական, առաւօտեան արշալոյս, գարնան վարդ, ուրախութիւն շոյալոյ և այլն: Կինը հարեմը մտնելով ամենից առաջ դաստիարակվում է,

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### ԹԻՒՐԿ ԿԻՈՋ ԱՉԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Ոչ մի ժամանակ կանանց ազատագրութեան հարցին նուիրված գրականութիւնը այնպէս հարուստ և ճոխ չէ եղել, ինչպէս որ վերջին տասնամեակի ընթացքում լոյս տեսած գրականութիւնը: Այս ուրախալի երեւոյթը մի շատ լաւ ապագայ է, որ կանանց ազատագրութիւնը՝ էմանսիպացիան ժամանակակից մարդկութեան կուլտուրական և սոցիալական ամենանշանակող պրոբլեմներից մէկն է, որ ժամանակի ընթացքում հասունացել և եւրօպայի ու Ամերիկայի քաղաքակրթված երկրներից շատերում նոյն իսկ մօտենում է իր դրական լուծմանը: Այդ բանը կարելի է նա մասնաւոր վկայել Գերմանիայի վերաբերմամբ, որտեղ վերջին տասնամեակում կանանց հարցի և նրանց շարժման մասին լոյս տեսան կլասիկական մի քանի աշխատութիւններ, որոնք իրանց վրա դրանցին գիտնական աշխարհի լուրջ ուշադրութիւնը: Օրինակի համար բաւականանաք այստեղ միայն յիշել իր Բրաունի և Հելինէ Լանգէի կանանց հարցին նուիրված խոշոր ժողովածու—աշխատութիւնները, որոնք կազմված են գերմանական ամենաշայտնի կին գրողների հաւաքական աշխատակցութեամբ: Գերմանիան վերջին տաս-

վարձատրութիւն է ստացել. երկրորդ, որ 2-իսով Մարքսին դիմելուց առաջ, դիմել էր իրան Սուվորովին, բայց սա չէր համաձայնել այդ գումարի նոյն իսկ կէսը տալ, մինչ ինքը Մարքսը ընկ աբեց այդպիսի ահագին վարձատրութիւն տալ մի գրողի, որի անունը դեռ հռչակ չէր ստացել 1899 թւին:

Միւս կողմից «НОВОСТИ» լրագիրը մի շարք յօդուածներով ցոյց տուեց, թէ որքան չնչին, ողորմելի է եղել գրական վարձատրութիւնը 70-ական և 80-ական թուականներին: Հռչակաւոր Դոստոևսկիին իր մի բոսանի համար ստացաւ Բաղդադի հրատարակչից ընդամենը 150 ռուբլի, այն ևս երկու նուագով: Այդ բոսանը 18 տարեկան թերթից էր բաղկացած, ուրեմն տաղաքական թերթին նա ստացաւ 10 ռուբլի վարձատրութիւն: Գլխը Ուսպենսկին ստանում էր աւելի քիչ—8 ռ. տաղաքական թերթին: Հռչակաւոր Տուրգենևի չէր կարողացաւ իր բոլոր գրուածները ծախել 50,000 ռուբլու:

«Գեղարուեստը գեղարուեստի համար» ֆորմուլան, որ անշուրջ վիպասաններից շատերը յաճախ գէշ են շինում իրանց տափակ և տաղտկալի վէպերի անբովանդակութիւնը արդարացնելու համար, այժմ նորից վիճարանութեան առիթ է դարձել ֆրանսիական քննադատական գրականութեան մէջ: Խոշ տեսակ վէպեր են այժմ հարկաւոր և պահանջուում, առում է մի քննադատ «Revue de Paris» հանդէսի մէջ: Հասարակութիւնը այժմ ուզում է, պատասխանում է նա, որ նրան գուարճացնեն, բայց մի և նոյն ժամանակ նրան բացատրեն և ուղղութիւն տան. նրա ուղղութիւնը ցրել է գալիս այն արտադրութիւններից, որոնք կարող են կոչվել միայն գեղարուեստի արտադրութիւնների: Հակառակ Ֆլորէնի խօսքերին, որ գտնում էր, թէ բելլիստիստիկական արտադրութիւնների վերջաւորութիւնը չը պէտք է լինի եղբակցութիւն, հասարակութիւնը աւելի և աւելի պահանջում է, որ վերջաւորութիւնը հենց եղբակցութիւն լինի: Վէպը պէտք է լինի ոչ միայն «գուարճութեան առարկայ» կամ «առիթ անուրջների», այլ խորհելու և քննադատելու առիթ:

Պէտք է ասել, որ այդպիսի ուղղութիւն ֆրանսիական և ռուսական գրականութեան մէջ շատ առաջ կար, իսկ մեր հայոց վիպագրական գրականութեան մէջ այժմ ևս կայ: Այդպէս է եղել և է այժմ մեր մէջ տեղեկացի (միտումաւոր) գրականութիւնը, որը ամենից առաջ (մեր խօսքը բելլիստիստիկական այն արտադրութիւնների ծախի է, որոնք գեղարուեստական կողմից լաւ են) ի նկատի ունի որոշ կենսական կամ սոցիալական եղբակցութիւններ, հետեանքներ կամ ուսուցում և որը, ընթերցողի զգացմունքների վրա ազդելով հանդերձ, շօշափում է և նրա միտքը, որը թէն յուշում է և ներգործում պատկերներով ու նկարներով, բայց զգուշ է նրան նաև մտածել, քննադատել, մտաւորապէս գործարարել:

այսինքն սովորում է պարել, շողորմել, երգել, դուր գալ և եթէ դատարարականութիւնը աշող է անցնում, այն ժամանակ նա կոչվում է «իբրալ» (գերադասելի) և հարեմում ստանում է մի քանի սենեակներ և նոյն իսկ իրան ստորագրելով մի քանի ստրկուհիներ: Այդպէս է լինում սովորաբար թէ սուլթանի և թէ հարուստ թուրքերի հարեմներում: Սուլթանը իրաւունք ունի հարձերից նուրբելու իրան զգալի ծառայութիւն արած պալատականներին: Հակառակ դէպքում հարեմ ընկած թրքուհին կամ չերքուհին մինչև իր կեանքի վերջը մնում է սերայում: Սուլթանի հարեմի կառայք շատ շատ կարող են միայն արքունիքի պաշտօնականներին հետ հաղորդակցութիւն ունենալ, որը սակայն խիստ հսկողութեան է ենթարկվում: Թիւրքիայի նախկին սուլթանների ժամանակ հարեմի հարձերը ահագին ազդեցութիւն ունեին իրանց տէրերի վրա: Այդ բանի համար հեղինակը իրեն ընտրող փաստ յիշում է Յընիկին յաղթող Սուլթանի հպարտ սուլթանին, որը գրեթէ բոլորովին գտնվում էր իր ուսմ հարձ Ռոքսելանի ազդեցութեան տակ: Վերջինիս շնորհիւ արքայից Սուլթանան իսկական կինը, իսկ սրա ամենամեծ որդի Մուստաֆային, որ թիւրք ժողովրդի և զօրքի սիրելին էր, հօր ներկայութեամբ սպանել տուեց:

Սուլթանների հարեմների սիրուհիների ազդեցութիւնը շարունակվեց և 17 ու 18-րդ դարերում, այն ինչ այժմ Արդու Համիդ Բ.-ի կանայք արնախանձելի և անազդեցիկ արածներ են, որոնց զլխաւոր պարտականութիւնը

ծել, հետեանքներ հանել: Ի հարկէ այդ պահանջին գոհացում տալու համար վիպասանը չը պէտք է զոհէ գեղարուեստականութիւնը, բայց և վէպը, մանաւանդ մեզ պէս ազգերի մէջ, չը պէտք է լինի միայն գուարճութեան կամ հանգստանալու առարկայ և առիթ. նա պէտք է յուզէ մեզ, ազդէ մեր գեացունքների վրա, բայց և զորէ մեզ մտածել, որոշ հետեւութիւններ հանել և եղբակցութիւններ անել: Այդ կողմից, օրինակ, այն վէպերը, որոնք յուզում, ալիկոծում են մեզ, բայց մի և նոյն ժամանակ զորում խորհել, ստիպում միտքը գործել, աւելի նշանակութիւն ունեն և ցանկալի են, քան այն վէպերը, որտեղ հեղինակը աշխատում է միայն գեղարուեստի համար, էսթետիկ էֆֆէկտ գործելու համար:

Վէպը պէտք է յուզէ ոչ միայն սիրտը, ոչ միայն հոգին, այլ և միտքը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՍԻՆ

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ յուլիսի 18-ին տեղի է ունեցել ներքին գործերի մինիստրի թաղումը: Թաղման հանդէպ եղել է չափազանց փառահեղ: Դադարը հանգուցեալի բնակարանից մինչև Նովոդելնի մենաստանը տանելու ժամանակ թափօրը կազմված է եղել հետեւեալ կերպ: Ամենից առաջ ընթանալիս են եղել ձիաւոր ժանդարմներն իրանց օֆիցէրներով, 2) կուրիէրները և պոստի ծառայողները, 3) մինիստրութեան և ժանդարմների կորպուսի բոլոր պաշտօնեաները, 4) բարձի վրա մինիստրի շքանշանները, 5) երգիչները, 6) հոգեւորականութիւնը, 7) դիակառքը, որի մօտ եղել են ժանդարմների կորպուսի օֆիցէրները, 8) ուղեկցողները և 9) ժանդարմների կորպուսի մի մասը—հետեւել են 2 օֆիցէրով և շտաբ-օֆիցէրով:

Պետական բանկի Պարսկաստանի բաժանմունքը կազմակերպել է 3 հատ առողջապահիկ-բակտէրիօլոգիական խումբ—Պարսկաստանում խօրհրայի տարածման և այստեղից էլ Ռուսաստան անցնելու դէմ ընդհանուր միջոցների ձեռնարկելու համար: Ամեն մի խումբը բաղկացած է մի բժշկից, մի կին-բժշկից, ֆէլդշէրներից և սանիտարներից: Խմբի հետ կայ շարժական բակտէրիօլոգիական լաբորատուար, արտահանել միջոցների բաւարար պաշարով, նոյնպէս և մի դեղատուն, մեծ քանակութեամբ զանազան տեսակ շիշուկներով: Մօտ օրերս Պետերբուրգից այդ խմբերի հետ միասին մեկնեցին պրիվատ-դոցէնտ Ս. Պ. Ջլաւոգորովը, Վ. Պ. Կրեստովսկի, Վ. Ա. Տարանուխին բժիշկները, կին-բժիշկ Տ. Ա. Կոխանովսկան և կանանց բժշկական կուրսերի ուսանողուհի Վ. Բանիսկան: Այդ խմբերի կազմութեան և ապրուստի ու այլ բոլոր ծախքերն իր վրա է առել ռուսական բանկի Պարսկաստանի բաժանմունքը:

Թիւրք սուլթանի անձնաւորութեան աստուածային պատիւներն տարն է:

Մօտաւորապէս վերոյիշեալ դրութեան են մատնված և ազդեցիկ ու հարուստ փաշաների հարեմների կանայք, իսկ թիւրք ազգաբնակչութեան միջին և ստորին դասակարգերի կանայք ապրում են էականապէս բոլորովին տարբեր պայմաններում: Դորիսի կարծիքով բազմակիսութիւնը ընդհանրապէս տարածված է թիւրքերի աւելի բարձր ու հարուստ շրջաններում: Ներկայումս 100 թիւրքերից մօտ 93-ը միակին են: Այս ուրախալի երեւոյթը պէտք է վերագրել ոչ թէ մտաւոր կուլտուրայի զարգացման ու ազդեցութեան, այլ թիւրքերի անտեսական անկման: Թիւրք բաղաբացիների կանանց դրութիւնը մի քիչ աւելի նախանձելի է: Նրանց վրա է ծանրաբեռնված անային գրեթէ ամբողջ աշխատանքը: Մի քանի տարի սրանից առաջ սովորաբար ծաղրվում էին այն կանայք, որոնք երաժշտութեամբ, նկարչութեամբ կամ գծագրութեամբ էին պարապում: Իսկ այսօր թիւրքուհին ազատ կերպով պարապում է վերոյիշեալ գեղարուեստներով, առանց քաշվելու դրօսում և դրսում և կանոնաւոր յարաբերութիւն ունի արտաքին աշխարհի հետ:

Ոսելով թրքուհիների կրօնասիրութեան մասին, հեղինակը գալիս է այն եղբակցութեան, որ նրանք կրօնական աւելի քիչ պարտականութիւններ ունեն և իրանց հոգիների փրկութեան մասին շատ քիչ են մտածում: Լէնց ինքը Մահմէդը առաջինը այդ բանի նկատի է ունեցել: Ըստ Դուրանի սովորաբար

Ինչպէս լսել են Բագուի լրագիրները, այն տեղ մտադրութիւն կայ հիմնել Բէմիսգոսն և այլ մերենաներով գրող կանանց արտել կամ բանաւորական խմբակցութիւն: Այդ նոր արտելի կանոնադրութեան ծրագիրը պէտք է մշակվի Պետերբուրգում արդէն գոյութիւն ունեցող համանման ընկերութիւնների կանոնադրութիւնների օրինակով:

„НОВ.“ լրագիրը լսել է, որ Պետերբուրգում, ներկայ օգոստոսի 7-ին Ռուսաստանի բոլոր դպրոցական շրջանների հոգաբարձուներից կազմվող ֆորմալայական ժողովի ծրագիրը վերջնականապէս գեռ որոշված չէ. ժողովրդական լուսաւորութեան մինիստր Վ. Ա. Գլազովը առաջարկել է հոգաբարձուներին կազմել այն խմբիկների ցանկը, որոնք, իրանց կարծիքով, կարևոր և անհրաժեշտ են կրթական գործի համար, և այդ կազմած հարցացողականներն ուղարկել իրան: Պ. մինիստրը դրանցից կընտրէ և կը կազմէ օրակարգի բոլոր հարցերը և այն ժամանակ միայն կը պարզվի ժողովի վերջնական զբաղմունքի առարկան:

„НОВ.“ լրագիրը հաղորդում է, որ հետեւեալ հրէա երգուեստ հաւատարմատարների օգնականներն արժանացան Պետերբուրգում երգուեստ հաւատարմատարութեան աստիճանին: Մ. Վինաւիլը, Մ. Գոլդշտայն, Գ. Պ. Ալիօզ-բէք, Վ. Գուրեմիչ և Միքայիլ, բոլորն էլ յայտնի փաստաբաններ. դրանցից մի քանիսը նոյն իսկ 10 տարուց աւելի է մնում էին երգուեստ հաւատարմատարի օգնականի կոչման մէջ:

Վաղիկավկասի փողոցներում կարցած են Տերեկի շրջանի կառավարչի յայտարարութիւնները, որով հրամայվում է քաղաքի աները, արդիւնաբերական և առևտրական բոլոր հաստատութիւնները կարգի բերել սանիտարական տեսակէտից և մաքրել, որովհետև Պարսկաստանում տարածվում է խօրհրան և սպառնում է ոտ դնել մեր երկրը: Ով որ գանդաղի կամ չը գործադրի մեզված սանիտարական պահանջները, կենթարկվի կամ խոշոր դրամական տուգանքի և կամ մինչև 3 ամիս բանտարկութեան:

ԱՐԴԱՆԱՆԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 17-ին տեղի ժամանց պրօֆէսոր Մառը և ունեցաւ տեսակցութիւն տեղիս քանաչա Էմմանուէլ Դեմուլօլիցանցի հետ, կարծեմ մագաղաթեայ հին աւետարանը տեսնելու համար, որը մի պատկառելի հնութիւն է: Պրօֆէսորը 18-ին մեկնեց դէպի Շաւղէթ այնտեղի հնութիւնները հետազոտելու համար»:

ԲԵՐԴՈՒՄԻՑ (Կարսի շրջան) մեզ գրում են. «Յուլիսի 14-ին յորդառատ անձրևներից յետոյ տեղի ունեցաւ չը տեսնված հեղեղ, որ մեր գիւղացիների ցանքսի արտերին ահագին վնաս հասցրեց: Դիւղացիները սարսափած ար-

տղամարդկանց վրա է ընկնում իրանց ընտանիքի իրական անդամներ վերաբերմամբ կրօնական պատասխանատւութիւնը: Փրանսիացի գիտնականի կարծիքով Մահմէդի սահմանած օրէնքները կանանց դրութեան վերաբերմամբ այնքան էլ անարդարացի չեն, ինչպէս որ սովորաբար կարծում են քրիստոնիստները: Մահմէդական կինը կարող էր այդ օրէնքներից շատ օգտվել, եթէ նա տգէտ և անփորձ չը լինէր:

Կանանց շարժումը մահմէդական աշխարհում արդէն սկսվել է, թէև նա կրիայի քայքայում է առաջ գնում: Թիւրք և եւրօպացի կանայք, որոնք առաջնորդում միմեանցից անջատված էին չինական պարսպով, վերջին ժամանակներս սկսում են միմեանց հետ բարեկամական և սերտ յարաբերութեան մէջ մտնել: Պոլսի արխիտօկրատ կանայք այժմ սիրով են յարաբերութիւն սկսում Պերայի եւրօպացի կանանց հետ: Եւրօպացի դաստիարակուհիները հետզհետէ մուտք են գործում մահմէդական ընտանիքներ և դրանց թիւը մի ժամանակ այնքան շատացել էր, որ սուլթանը 1901 թ. թիւրք հոգեւորականութեան ֆանատիկոսութեան բռնկումից վախենալով մի առանձին իրադէպով արգելեց դրանց մուտքը թիւրքական ընտանիքներում, որը սակայն դրական հետեանք չունեցաւ:

Հակառակ թիւրքաց կառավարութեան օպպոզիցիային վերջին տարիներս Թիւրքիայի գրեթէ բոլոր գաւառներում հիմնվեցին բաւական իւրական դպրոցներ: Պոլսում նոյն իսկ

ներկից դուրս թափվեցին, դէպի ազատ տեղեր, վախենալով թէ մի գուցէ իրանք էլ ֆեաւվեն, տների փուլ գալուց: Ամենից շատ ֆեաւվել են Չաթախ կոչված ագաթալի արտերը, որ բերդուացիներին է պատկանում: Բոլոր ֆեաւը դեռ չէ որոշված. նոյնպէս մասամբ ֆեաւվել են հեղեղից, հայաբնակ Էօրիկ, Ճուրճուրիս Թէմուրէ և Զարգանէս գիւղերի ցանքսերը: Յորդառատ անձրևները տեղացին 15 օր շարունակ. այսօր, յուլիսի 18-ին, երկինքը պարզվեց: Դիւղացիները սկսեցին խոտահարը և «աղբին» կոչված արտերի գարեբաղը. եթէ նորից չը հանդիպեն բնական պառտահարների մնացած չը ֆեաւված արտերը, հացը առատ կը լինի: Պողատու ծառերը և բանջարանոցները նոյնպէս լաւ դրութեան մէջ են:

ՇԻՐԱՅԻ գաւառից մեզ գրում են. «Վաշխառութիւնը Շիրակում տարածվել է և մեծ չափեր է ընդունում: Մանրավաճառ հրէաները, որ վխտում են Շիրակի ամեն մի քունջ ու պուճախում, բաժում են արիւն քրտինքով ձեռք բերած աշխատանքը. վայ այն մարդուն, ով վաշխառուի ձանկը ընկնի, այլ ևս ազատվել չը կայ, տոկոս տոկոսի վրա բարդվելով դառնում է նրա ստրուկը: Մահմէդ 15 տարի առաջ եկել է այստեղ մի հրէայ մանրավաճառ, որ թել ու ասեղ էր ծախում միայն, իսկ այսօր դառել է Շիրակի Բօլշիլը, և համարեա քիչ բացառութեամբ բոլոր շիրակեցիք պարտ են նրան: Նորիս շիրակեցի ժողովրդի, նա, երէկվայ թել ու ասեղ ծախող չարչին, այսօր դառել է աղա, նրա տոկոսների երեսից քանի քանի ընտանիքներ անբաղաւաղ են»:

ԱԼԷԳՍԱՆԻՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Կիրակի օրը յուլիսի 18-ին, հին ժողովարանի դահլիճում, դերասան պ. Սաթակը տուեց իր երրորդ և վերջին ներկայացումը: «Արդիւնաւոր Պաշտօն» Օստրովսկու: Պիեսան ընդհանրապէս անցաւ աշող: Պ. Սաթակը, ժաղօվի դերը տարաւ սպասածից լաւ, մանաւանդ վերջին գործողութեան մէջ: Բեմը լուսաւորված էր գաղպիկ լապտերներով: Լաւ էին օր. Վեհապետեաններ, օր. Սաթակի Պօլի-նայի դերում և օր. Նուարդ Իւլինկայի դերում: Օր. Ղազարեան Աննայի դերում աւելի լաւ կը լինէր, եթէ դերը լաւ դերուար: Վաս չէր Տէր-Սարգսեան, Իւսուֆի դերում: Այս ներկայացումով ապացուցվեց, որ եթէ գնբը մատչելի են լինում, հասարակութիւնը լցնում է թատրոնը ծայրէ ծայր, ինչպէս որ այս անգամ չէր մնացել ոչ մի տոմսակ:

ՇԱՄԱՆՈՒՑ մեզ գրում են. «Ութ օր է, որ հիւր է մեզ մօտ Բաքուի դրամատիքական խմբի անգամ, տեղացի դերասան պ. Ս. Ուկանեանցը, որը մանանկցութեամբ ամառանոց եկած և բնիկ սիրողներ, կիրակի, յուլիսի 18-ին, տեղիս գիւղաբնական գնդի դահլիճում ներկայացրեց «Այան-Բալասի» և «Կըթ-կըթ» վօդվիլը, որի արգիւնքը, չը հաշւած,

լոյս է տեսնում թիւրքերէն լեզուով պարբերական մի հրատարակութիւն, որ նուիրված է թիւրք կանանց շարժման և որին աշխատակցում են թրքուհի մի քանի գրողներ: Դրանցից նշանաւոր է Մեհրի-Նիսան, որ կանանց հարցի մասին վիպական և հրապարակախօսական մի քանի աշխատութիւններ է լոյս ընծայել: Թիւրք ժողովրդի ամենահասարակ և ամենաբարձր դասակարգերի կանայք առաջադիմութեան համար աւելի մատչելի են, քան թէ միջին քաղաքացիների կանայք: Ժողովրդի հասարակ խաւերում տիրող աղքատութիւնը կնոյ է տղամարդու մէջ եղած սոցիալական տարբերութիւնը հետզհետէ հարթվում է:

Աշխատանքը մահմէդական կնոյը դարձնում է իր ամուսնու հետ հաւասար արժէք ունեցող ընկերուհի: Թիւրք կինը գործում է գորգեր, պարապում է ձեռագործութեամբ և այդպիսով իր ընտանիքի տնտեսական դրութեան բարելաւումը շատ է նպաստում: Բարձր դասակարգի կանայք օտար լեզուներ սովորելով հետզհետէ թողնում են հին տրագիկան: Պատուի կրանց թիւրքիկ ստրկութեան այն լուծը, որ իրան կաշկանդել և զրկել է մարդավայել դրութիւնից: Հեղինակի կարծիքով կուլտուրական աշխատանքը ժամանակի ընթացքում ըստ արժանւոյն կը վարձատրի մահմէդական կնոյ իրականացնող ձգտումը:

Լ. Բաբայան

Թիֆլիս.



կուցանում է, որ թշնամին յուլիսի 20-ից շարունակում է յետ նահանջի դեպի հիւսիս: Յուլիսի 21-ին երկրագնդի բանակը գրաւեց Խայկէնը և Նիւ-Չփուանը, որ գտնվում են Ին-կու շառահանգստից 30 մղոնի վրա:

Կ. ՊՈԼԻՍ. (ՎՕԼԳ). Բ. Դուռը դեպքանքերին ուղարկեց մի նոտա, որի մէջ գրվում է՝ խնդրեցի առաջարկել Մակեդոնիայի հիւպատոսներին հետևել Հիլի-փաշայի խորհրդին և գիւղերից դուրս չը գալ առանց պահակաւորի, որովհետեւ բոլորներն իբր թէ նպատակ ունեն փախչելու հիւպատոսներից մէկին: Օտոմանեան կառավարութեան ցանկութեանը հետևելուց հրաժարվելու դէպքում, կառավարութիւնը հետևանքներ է իրանից ամեն տեսակ պատասխանատուութիւն այն հետեւանքների համար, որ կարող են ծագել:

23 յուլիսի

ՄՈՒԿԻԴԵՆ. Երեկ անցան երկու սանիտարական գնացքներ, որոնք տանում էին մօտ 800 զինուոր և 46 օֆիցեր, վերաւորված յուլիսի 18-ի կուռում Սիմուէլի մօտ: Մասնակիցների մի ամբողջ զօրքի պատմաճանքը վերադառնում են մեր զօրքերի քաջութեան և կայունութեան մասին: Կոնստանդնուպոլսից վաղ առաւօտից մինչև մութը կոնստանդնուպոլսից դանազան կէտերում մի քանի անգամ անցան ստիւնների և նշանաւոր կորուստների հասցրելու հակառակորդին: Պատմում են, որ երկուստեցիները մօտաւորապէս չորս բաւարիւն, իջնելով իրան գաղութային, կատարելապէս տուին ու վրա եղան մեր բաւարիւնի աջող գնդաձգութիւնը: Մի ուրիշ մասում մեր բաւարիւնը ներս խուփեց թշնամու խրամատը: Նրա մասին մէջ գտնվողները մինչև անգամ չը կարողացան հարուածին դիմաւորել և այնտեղ և եթ ըստը ջարդվեցին: Բոլոր մասնակցողները յարգանքով են խօսում զօրքաւորի հրամանատարի սառնարիւնութեան և ղեկավարում ղեկավարելու ընդունակութեան մասին, որը չը նայելով հակառակորդի թափան գերազանցութեանը, խուսափեց շրջապատվելուց և ինքն երկու անգամ սպառնաց նրա թեկին: Մեր կորուստները յուլիսի 18-ին, պատմաճանքի համեմատ, 1000 մարդուց աւելի է: Յուլիսի 19-ին կոնստանդնուպոլսից:

ՍՕԿԻՍ. Ֆինանսների միւստը պատրաստեց առևտրական դաշնակիցների նախագիծը օտար պետութիւնների հետ և առաջարկեց ղեկավարական գործակալների բանակցութիւններ վարել նախագծի հիմքերի մասին:

ՉԻՖՈՒ. (Բէյութ): Եկան երեք եւրօպացիներ, որոնք աղաղակ են ունենում կողմից ջրատույզ արված «Միլիսանդ» շոգեմուտի: Նըրանք ասում են, որ երկուստեցիները յուլիսի 15-ին գրաւել են Գայլի լեռը, որը գտնվում է Պօրտ-Արտուրի մօտերը:

ՏՕԿԻՍ. (Բէյութ): Պօրտ-Արտուրի անկումը սպառնում է մեծ անհանգիստութեամբ: Այստեղ այն համոզմունքն է տարած, որ կրիտիքական քաղցն մօտենում է: Ենթադրում են, որ երկուստեցիները աւելի վաղ կարող էին վերցնել մարտկոցները, բայց նրանք մօտենում են աստիճանաբար և նախազգուշաբար պատրաստվում են արտիլերիայի օգնութեամբ, առաջ գնալով հետևանքների գնդերով: Լուրեր են տարածվել, թէ Միկադոն ցանկութիւն է յայտնել, որ կարելի չէ չափ քիչ կեանք գոհվել: ՊԵՏԵՐԲՈՒԳ. Հրատարակված են Բարձրագոյն ուղղանք. 1) Դոնի կողակային զօրքի մի քանի մասերի համար հարկաւոր ձիեր հայթայթելու նպատակով Դոնի երկրի շրջաններից և ծառիկների նահանգի Չմիլի գաւառի ազգաբնակչութիւնից. 2) Ժամանակաւոր կանոններ հաստատելու մասին ուղևայ մի քանի նաւահանգիստների պահպանութեան վերաբերմամբ պատերազմի ժամանակ մինչև պայմանագրերի հրատարակութիւնը: Նաւահանգիստները հետևանքներ են Սվիաբորգ, Կրոնշտադտ, Լիբավա, Սեվաստոպոլ, Օչակով, և Բաթում:

ԽճԱԳԻՐ. ԱՆԷՔՍԱՆԴՐՈՍ ԲԱՆԻՔՈՒՆ  
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ  
ԻՍՏԱՆԿԱ ՄԵԼԻԻ-ԱՆԱՄԱՆԵԱՆ

ԲԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

### Գր. Տեր-Գրիգորեանց

ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրքեր) և երեխայոց հիւանդութիւններին, ունի բնագիտական կարգիւն. 154. Միքայելեան պրօպագանդ, տէլեֆօն 825.  
(2. հ. հ. չ.) 64—105

**Նախիջեւանի եւ Բեսարաբիայի** թեմական դպրանոցում կան արձակ դասեր. ընդհանուր պատմութեան, ռուսաց պատմութեան, հայոց պատմութեան և աշխարհագրութեան թեմ 17, որի համար նշանակված ուսուցիչն է նոր ծառայութիւն մտնողների վերաբերմամբ 1020 ընդունել, իսկ 5, 10 և 15 տարի ծառայողների համար դպրոցական ասպարէզում ուսուցիչ աւելանում է 72, 144 և 216 ընդունելով: Ցանկացողները պէտք է խնդրամատոյց լինեն դպրանոցի տեսչութեանը, ներկայացնելով իրանց աւարտման (համալսարանական-լիցեւալական և պատմական բաժնի), նախկին ծառայութեան և անձնավարման թեմական վկայականները (СВИДЕТЕЛЬСТВО О ДИАКОНАДЕЖЕСТВИИ) մինչև օգոստոսի 5-ը: 1—10 Տեսուչ դպրանոցի Գ. Զարիփեան

### Գուտտեներգ

գրավաճառանոցում վաճառվում են.

«Ս. Էլմիաթի», 1600 դարեկարձ, 15 պատկ. 10 Կ. «Գրեգոր լուսաւորիչ» և իւր որդիքը 15 Կ. «Կորածներ», պիւն 5 գործ., Գ. Անանեանի 40 Կ. «Աղբաւոր հայր», Յար. քան. ձուլութեան 25 Կ. «Ենիշեր», թիւրքաւայրի կեանքից, Վ. Փափազեանի 5 Կ. «Իրօշակ», թարգմ. Գ. Ս. Մկրտումեանից 8 Կ. «Վերածնութիւն Հայաստանի», Պոստոյի, թարգմ. Պ. Պ. 25 Կ. «Անիծումը վայրը, թարգմ. Տեր-Պօղոս. 20 Կ. «Անիւրկ հին հայ բանահիւտութեան վրա», Ա. Տ. Պ. 10 Կ. «Անտիպ երկիր», Ա. Արովեանի 25 Կ. «Ժողովածու, հրատ. Մ. Հ. ուս. 1 Կ. «Մամուլ», 3 հ. միասին, Բաֆֆի 3 Կ. 50 Կ. «Դաւիթ Բէկ», 3 հ. միասին, » 3 Կ. 50 Կ. «Ոսկի արաղայ», » 1 Կ. 20 Կ. «Հոս Կիւն», Ա. Անարոնեանի 40 Կ. «Պատկ», թողով. Բաֆֆի գրուածքներից 50 Կ. «Գրեգոր Ջանեան ուսումնական էջերում, թարգմ. Գ. քան. Մկրտումեանից 35 Կ. «Տաճիկ փաշա», » «Մարդ եմ», Էբէրի թարգմ. Ս. Մալխաս. 1 Կ. Պոստոյի գնդերին անվում է բաւարար դեղ: Վերադրված ջարդով ցանկացողները պիտի ուղարկեն անպատճառ կանխավճար: Դրախանութի հայերէն, ռուսերէն և թատրոնական գրքերի ցուցակները ցանկացողներին ուղարկվում է ձերի:

Դիմել՝ Книжный магазинъ «Гуттенбергъ» Дворцовая, Г. Галустяну. 3—3

Լոյս տեսաւ—ՍԻՄ. ԲԱՆԻՔՈՒՆ

### Բանաստեղծութիւններ

Գ ի ն ը 20 Կ օ պ է Կ

Լ. ԱՆԴՐԵՅԵՆ, Անգլոնգր.

Թարգմ. Սիմ. Բաբեանի. գինը 10 Կօպ. Դիմել հրատարակչին—Армянскъ (Таврич. губ.) Ив. Давидову և կովկասի գրավաճառներին: (հ. չ.) 4—5

### ԿՐՈՆԻ ԴԱՍՏԳՐԵՐ

Աւաիւրաց համար

|                          | Բ. Կ.         |
|--------------------------|---------------|
| 1. Դասաստոր կրօնի I տարի | — 25 250/0 Կ. |
| 2. » » II »              | — 20          |
| 3. » » III »             | — 30          |
| 4. Հին-ուխտ (ընդարձակ)   | — 45          |
| 5. » (համառոտ)           | — 35          |
| 6. Նոր-ուխտ              | — 40          |
| 7. Գրեթէ առաքելոց        | — 40          |

Ուսուցչաց համար

|                                      | Բ. Կ.  |
|--------------------------------------|--------|
| 8. Ուղեցոյց (մեթոդիկայ) հին-ուխտի    | — 1 75 |
| 9. Ուղեցոյց (մեթոդիկայ) նոր-ուխտի    | — 2 5  |
| 10. Ուսուցումը քրիստոնէական կրօնի Գ. | — 1 50 |
| 11. Ուսուցումը քրիստոնէական կրօնի Ե. | — 50   |

Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցեով.

- 1) Тифлисъ, священнику С. Саакянцъ, Ком. мерческое училище.
- 2) » Книжный магазинъ «Гуттенбергъ»
- 3) » » «Центральны».

Դասագրքերի պահեստը ամառս գտնվում է պ. Ալեքսանդր Ամիրաջեանցի մօտ (Карвансарай Тамамшева мануфактурный магазинъ А. Амрагова). Ցանկացողները նրանից և կարող են պահանջ անել:

Սահակ քան. Սահակեանց  
Ե. ա. օ. յլ.—օ. օր.—մէջ ու. ա. օ. 32—66

### Հին-Նախիջեւանում

օգոստոսի 20-ից բացվում է գրաւաճառանոց Արամ Պօղոսեանցի, որտեղ վաճառվում են դասական և ընթերցանութեան գրքեր ուսուցչական և հայոց լիցեւնիումի դպրոցական դասական և ամեն տեսակ պիւտյոքներ:

(2. հ. չ.) 4—10

### Կենտրոնական

գրավաճառանոցում, Թիֆլիս, վաճառվում են հետևեալ գրքերը.

Տեր-Աւետիքեան Ստեփան, Իրանդիայի դատը, Բագու, 1898 թ. Կ. 20 Կ.  
» Նահատակը, Թիֆլիս, 1898 թ. 20 Կ.  
» Սամիտարնի, Թիֆլիս, 1897 թ. 20 Կ.  
» Ղեկավարներ, գիրք ա. I Կապ ընդունողը, II Մեր Տէրը, Կ. 40 Կ.  
Լէկուլէ Էրնեստ, Բարոյախօսութիւն զկանանց, Պոլս, 1889.  
Կորելի Մարկոս, Մի մանկան հոգու պատմութիւնը, վէպիկ ոչ մանուկների համար 1 Կ. Նեգրի Աղա, Բանաստեղծութիւններ, I պարկ, 1903 թ. Կ. 30 Կ.  
Պատմագիրը հայոց Ղազար Փարպեցի, հատոր առաջին, գիրք չորրորդ, Կ. 1 Կ.  
Բաֆֆի, Ոսկի արաղայ հեղինակի պատկերով, ա. և բ. մաս, Բագու, 1903 թ. Կ. 1 Կ.  
Ֆուլգա Լուդվիգ, Հերոսարատ, ողբերգութիւն 5 գործ., Թիֆլիս, 1904 թ. Կ. 50 Կ.  
Վերոյիշակ գրքերից միասնապէ 10 Կ. գնդանքը բաղաւթում 100% գեղծ են ստանում, գաւառացիք ճանապարհածախս չեն վճարում. վճարը կանխիկ: (2.) 2—3

**Ասիաբադի** հայ կանանց բարեգործական ընկերութեան մասնական պարտէզի համար հարկաւոր է մի հրմուտ գիթնաղիւարտ վարժուհի. պայմանների մասին դիմել՝ Асхабадъ, Г-жѣ Мамиконьянъ. (հ. հ.) 4—8

## ՀԱՂԻՍՊԱՆԿԱՆ ԴԱՍՏԳՐՆԵՐ

Ի. Ե. ԲՐՕՆ ՅՕՆ-ԲՐԷՆՆԵՐԻ

հիմնած

Թիֆլիս, Միքայելեան պրօպ. № 161.

Դասարանների նպատակն է երկու սեռի անձերին համեմատաբար կարճ միջոցում տալ տեսականապէս և գործնականապէս վերջաւորված առևտրական կրթութիւն: Դասարանները պատրաստում են հաշուապահներ, թղթակիցներ, կոմտորշիկներ և այլն պետական և առևտրական հաստատութիւններում ծառայելու համար:

Դասարանները բաղկացած են 3 մասերից. I պատրաստական մասում ընդունվում են երկրպագան դպրոցների աւարտած անձերը, II-ում—հաշուապահական մասում պրօգրիմադիաներ կամ քաղաքային դպրոց աւարտած անձեր և III զուտ գործնական մասում հաշուապահութիւն և առևտրական թուղթագրութիւն գիտեցող անձեր:

Ամեն մի բաժանմունքում պարագլուխները տնտես են կէս տարի: Այն անձերը, որոնք չունեն իրանց ուսման մասին պէտք եղած դոկումենտները, ենթարկվում են որոշված քննութեան:

Պարագլուխների տեղութիւնը կախված է կրթական ցիւղից: Հաշուապահական դասարանները, ինչպէս մասնագիտական ուսումնական հաստատութիւն, գրված են շատ օրինակելի ձևով. դասարաններն ունեն գրադարան, քանդակ և կովկասում առաջին (1890 թ-ից գոյութիւն ունեցող) Հաշուապահական կաբինէս:

Ներկայ ուսումնական տարում դասատուներ են հրաւիրված լուսաւոր մասնագէտ մանկավարժներ: Ուսման վարձը. I բաժնում—60 ր., II-ում—75 ր. և III-ում—50 ր. Զրադուխներն ամեն օր են, 5—8-ը ժամը երեկոյեան:

Պարագլուխների սկիզբն է սեպտեմբերի 15-ից: Մանրամասն տեղեկութիւններ և ծրագիրը տրվում է ամեն օր դասարանների գրասենեակում առաւօտեան 9—12-ը և երեկոյեան 5—8-ը:

Հեռախօս № 286.

(հ. չ.)

8—15



**Ս. Պետերբուրգի մեքենայական արդիւնագործութեան ընկերութեան ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵԻ, ԿԱՆԱՆՏ, ՏՂԱՄԱՐԴԿԱՆՏ և ԵՐԵՄԵՆԵՐԻ**

## ԿՕՄԻԿՆԵՐ,

նոյնպէս և սկօրիսողներ ու սանդալներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդր-կովկասի միւս քաղաքներում ԱՄԵՆԱԼԻ վաճառատներում:



Խոնդրի վրա է ուղեղ դարձնել ֆաբրիկայի նշանի վրա:

## ԿԵՕՊՈԼԴ ՆԻՅԵՒԼԼԵՐ

Առևտրական տան պահեստում կայ բնութագրական համար մեծ քանակութեամբ ոռուսական և արտաստանական արդիւնագործութեան

## ԿԱԶՈՒԵՂԷՆ ՍՊՐԱՆՔՆԵՐ

Տէլեֆօն № 546.

18—100

Երևանեան հրապարակի վրա: